Ամերիկյան պահպանողականների թերթը՝ «Վաշինգտոն թայմսը», իր փետրվարի 5-ի խմբագրականում խորհուրդ է տալիս ԱՄՆ նախագահին, որ նա շուտացնի Հայոց ցեղասպանության ճանաչումը: Ջորջ Բուշի ջերմ աջակից ու գաղափարակից այս թերթը խիստ քննադատության է ենթարկել Բլինթոնի քաղաքականությունը ցեղասպանության հարցում, անվանելով այն անսկզբունքային տրամաբանություն:

Անցյալ տարի Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեռի օրինագիծը վիժեցնելու իր արշավով Բլինթոնի վարչակազմը օգնեց, որ պրագմատիզմը պատժի իր սկզբունքայնությանը: Ի հիասթափություն Ամերիկայի, ճանաչելով ցեղասպանությունը, Ֆրանսիան ստանձնեց բարոյական առաջնորդի դերը, ինչին չկարողացան հասնել ԱՄՆ Կոնգրեսն ու Սպիտակ տունը, գրում է թերթը:

Դժբախտաբար, ամերիկյան քաղաքական գործիչ-

ները անցյալ տարի խարխուլեցին Ամերիկայի վարկը՝ տեղի տալով Թուրքիայի ճնշումներին: Ցեղասպանության դեմ արշավ վարելու Բլինթոնի փաստարկները սահմնկեցուցիչ են, եթե նկատի ունենանք, թե ինչ դաժանությունների հետ է կապված այս հարցը: Ամերիկան արժանի է ունենալու այնպիսի նախագահ, որը բարոյական մանդատը կարճատեւ տնտեսական նկատառումներից ավելի բարձր կդասի, նշում է «Վաշինգտոն թայմսը»:

«Ազատություն» ռադիոկայանի հաղորդմամբ, Ամերիկայի հանրապետական պահպանողականների թերթը համոզված է, որ ինչ-որ մի ժամանակ ԱՄՆ-ը ստիպված պիտի լինի ընդունել Հայոց ցեղասպանությունը: Եվրոպական խորհրդարանը, Իտալիան, Բելգիան, Արգենտինան եւ այժմ էլ Ֆրանսիան արդեն արել են դա: Ութ տասնամյակ հետո ցեղասպանության ճանաչումը ուշացնելը կառուցողական չէ, եզրակացնում է թերթը:

* * *

Բարուն ընդունում է Թուրքիայի միջնորդությունը

Արմենայրես-2-3-2001

Թուրքական «Չաման» թերթն իր այսօրվա համարում տեղեկացնում է, որ Ադրբեջանի նախագահի արտաքին քաղաքականության գծով խորհրդական Նեվրուզ Մեհմեդովը հայտնել է Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը Թուրքիայի հովանավորության ներքո լուծելու իր երկրի համաձայնությունը: Նա տեղեկացրել է, որ Ադրբեջանը դրա-

կանորեն է մոտենում ԵԱՀԿ շրջանակներում ստեղծված Մինսկի խմբի գործունեությանը այս հարցի լուծման ուղղությամբ, բայց գտնում է նաեւ, որ հարկավոր է ուշադրություն դարձնել Թուրքիայի միջնորդությամբ հարցը լուծելու Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ջեմի առաջարկին: Մեհմեդովը հայտարարել է, որ Ադրբեջանը ընդունում է Ջեմի առաջարկը: →

Հայաստանում նավթի եւ գազի որոնման աշխատանքները շարունակվում են

ԵՐԵՎԱՆ, 28 ՓԵՏՐՎԱՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ:

-Իհարկե, հույս կա, որ նավթ եւ գազ կգտնվի Հայաստանում, բայց մինչ այդ պետք է կատարվեն լավ տեխնիկական հետազոտական աշխատանքներ,- Արմենպրեսի թղթակցին հայտնեց Հայ-ամերիկյան հետախուզական ընկերության (ՀԱՀԸ) գլխավոր տնօրեն Թիմ Փափուորթը: Ընկերությունը 1997թ համաձայնագիր է կնքել ՀՀ կառավարության հետ, ըստ որի, նավթի եւ գազի որոնման աշխատանքները ֆինանսավորում է ընկերությունը, ու եթե աշխատանքներն ավարտվեն հաջողությամբ, ապա նավթն արդյունահանելիս՝ ծախսված գումարները նավթի տեսքով հետ կվերադարձվեն: Հետախուզական աշխատանքներ իրականացնելու համար ընկերությունը ՀՀ կառավարության հետ ունի հետախուզական աշխատանքները շարունակելու 5 տարվա արտոնագիր՝ 12 հազար քառ կմ տարածքի համար (հանրապետության արեւմտյան հատվածում): Բացի արտոնագիրը, կնքվել է նաեւ աշխատանքային պայմանագիր, համաձայն որի, ընկերությունը պարտավորվել էր փորել 3 հորատանցք, եւ կատարել 60 կմ սեյսմիկ պրոֆիլի աշխատանքներ՝ ծախսելով 10 մլն դոլար: Թ. Փափուորթը հայտնեց, որ կատարվել են 200 կմ սեյսմիկ աշխատանքներ՝ Հայաստանի երկու հեռանկարային վայրերում. 100 կմ-ը Գառնիի, 100-ը՝ Արմավիրի տարածքում: Փորվել է մեկ հորա-



տանցք՝ Գառնիի մոտակայքում. հորատման աշխատանքները դադարեցվել են 1998թ՝ 3554մ խորության վրա: Ծիշտ է, 3200մ խորության վրա նավթի հետքեր հայտնաբերվել են, բայց դրանք բավարար չեն եղել արդյունաբերական պաշարների համար: Այդ ընթացքում, ըստ Թ. Փափուորթի, ընկերության ղեկավար Ալեն Պոլսենը ծախսել էր 30 մլն դոլար: Սեյսմիկ աշխատանքները ընկերության կողմից շարունակվում են՝ հորատման տեղերը որոշելու համար: Եւ Ա. Պոլսենի մահից հետո, ընկերությունը ներդրողների կարիք ունի: Ինչպես ասաց ՀԱՀԸ գլխավոր տնօրենը, ընկերությունը ներկայումս 2-3 ուրիշ ընկերությունների հետ կապեր ունի, եւ ակնկալում է նոր ներդրողների ներգրավել այս աշխատանքներում:

* * *

Իրավունք չունեն

Մարտ 1-ին «Ազատամարտի վետերանների միությունը» (ԱՎՄ) երեկ հանդես եկավ «Հոկտեմբերի 27»-ի եւ ԼՂՀ-ի մասին հայտարարությամբ, որում մասնավորապես ասվում է. «ՀՀ իշխանություններն իրավունք չունեն ենթարկվելու գերտերությունների կամքին: Անվիճարկելի է Արցախի, ինչպես նաեւ ազատագրված մյուս տարածքների հայկական պատկանելությունը, անբեկանելի՝ արցախահայության հետագա ազատությունը: ԱՎՄ-ն դատապարտելով ԼՂՀ-ի եւ ՀՀ-ի նկատմամբ Ադրբեյջանի պահանջատիրական նկրտումները, շեշտում է. հայ ժողովուրդն ունի Մարտակերտի շրջանի գրավյալ մասը, Շահումյանի շրջանը, Գարդմանքը, պատմական Ուտիքի նահանգի մյուս տարածքները, ինչպես նաեւ՝ Նախիջեւանն Ադրբեյջանից ազատագրելու առաքելություն»:

ՍՏԱՅՎԱԾ ՆԱՄԱԿ

Վերջերս լիբանանահայ մսավորական եւ հրադարակագիր Սիմոն Հովիվյանից մի անձակ ստացանք, որից տեղեկացանք նաեւ որ 82 ամյա հարգելի մեր բարեկամ անձակագիրը վիրավորվել է ավսոլթարի ի հետեւանք, այդ առիթով որն. Հովիվյանին ցանկանում ենք փաշառողջություն եւ մոտալուս աղափնում:

Պրն. Հովիվյանը իր 26 Հունվար 2001 թվակիր անձակում գրում է.


«Յարգելի՛ Պրն. Մովսես Քեչեւան, խմբագրադես «ԱՐԱՔՍ» թերթին - Թեհրան Սիրելի՛ Պրն. Ս. Քեչեւան, Նոր ստացայ տակաւին, «ԱՐԱՔՍ» թերթիդ (Նոյ-Դեկտ.) վերջին թիւը, եւ յափճակութեամբ կարդացի մա՛նաւանդ վերջամասին տրուած ուրախալի լուրը. «ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԵՒ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԻՋԵՎ» խորագրեալ բաժինը:

Այս ուրախ լուրով նորոգուեցայ, երիտասարդացայ իսկապէս:

Բարեբախտաբար մենք ունինք երկու հօ՛ր բարեկամ Պետրոսներ. Հիւսիսէն Ռուսաստան. իսկ հարաւէն՝ ԻՐԱՆ, որոնք միշտ արթուն են եւ կը հսկեն մեր փայլերուն, մօտէն կը հետեւին մեր յետեւական գործունէութեան: Եւ յիշի թոյլ չտան որ սահինք եւ իյնանք: Փա՛ռք Ռուսաստանին, եւ Պաշի՛ւ Իրանին: Միշտ անսասան մնան եւ հօ՛ր:

Պրն. Հովիվյանը բացատրություններ է սվել նաեւ իր «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀ ԵՒ ՀԱՅԿԵԱՆ ՑԵՂԸ» գրքի մասին, (տես. Արաքս թիվ 86 էջ 10), եւ շնորհակալություն հայցնել Արաքսի կանոնավոր առա՛ման համար:

Պրն. Հովիվյանը իր անձակին կից մեզ առա՛ել էր նաեւ մի ֆանի մսավորականի կարծիքը որոնք բոլորն էլ հիշյալ գիրքը ու՛ճագրաւ եւ շահեկան են գտել:



ԱՍՈՒԼԻՍ ՊԱՏՄԱԲԱՆ ՌՈՒԲԵՆ ՍԱՖԱՐՅԱՆԻ ՀԵՏ

Թուրքիայի տնտեսական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամի հրավերով մարտի սկզբին Ստամբուլ էին մեկնել Հայաստանի Արսաֆին Գործոց Նախարարության (ՀԱԳՆ) Եվրոպայի վարչության պետ Սամվել Սլրտչյանը և Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի (ՀԳԱԱ) արեւելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու Ռուբեն Սաֆարյանը՝ մասնակցելու «Կալուստյան փնտրտուքներ Կովկասում» միջազգային համաժողովին:

Ստորև տպագրում ենք «Արսաֆի» հարցազրույց Ռուբեն Սաֆարյանի հետ:

Օ-Ինչպես տեղեկացնում է թուրքական մամուլը՝ միջոցառման կազմակերպիչները նպատակ ունեն, քաղաքացիական կազմակերպությունների հանգույն, երկխոսություններ սկսել հասարակական կազմակերպությունների մակարդակով: Սա հիշեցնում է Թուրքիայի Մեծ Մեջլիսի հոկտեմբերի որոշումը՝ Հայոց ցեղասպանության խնդիրը փորձել լուծել հայ և թուրք պատմաբանների երկխոսության շրջանակներում: Այսինքն, կարելի է ենթադրել, որ Թուրքիան փորձում է կիրարկել միջպետական փոխհարաբերությունների նո՞ր տարբերակ:

□-Իմ կարծիքով՝ այս դեպքում մի քիչ այլ էր մտնեցումը: Համաժողովի մասնակից թուրք պատմաբաններից մեկը, որի անունը հավանաբար դեռ չարժե հրատարակել, առաջարկեց երկխոսություն սկսել ոչ թե ընդհանրապես հայ և թուրք պատմաբանների միջև, այլ երկխոսություն այն թուրք պատմաբանների հետ, ովքեր չեն շեղվում ճշմարտությունից: Նա նույնիսկ օգտագործեց «ազնիվ թուրք պատմաբաններ» արտահայտությունը

Օ-Ճշգրտենք՝ ովքեր չեն «ազնիվ թուրք պատմաբանները», որոնք «չեն շեղվում ճշմարտությունից»: Դրանք պաշտոնական Անկարայի տեսակետներն արտահայտող «պատմաբաններն» են, թե՞ նկատի ունեն Թաներ Արչանի թեր:

□-Լավ հարց է, տեղին: Ժամանակակից Թուրքիայում ստեղծվում է պատմաբանների մի խումբ, ովքեր փորձում են թուրքական պատմագրության մեջ առաջին անգամ նոր կերպ մեկնաբանել ցեղասպանության հետ կապված իրադարձությունները: Դրանք հիմնականում այն պատմաբաններն են, ովքեր աշխատում են մասնավոր համալսարաններում կամ կապված են Արեւմուտքի հետ. տարվա մի մասը կարող են գնալ և այնտեղ դասախոսություններ կարդալ կամ էլ ընդհանրապես ապրում են ԱՄՆ-ում ու Եվրոպայում:

Նրանք ճանաչում են ցեղասպանության փաստը և, իհարկե, տարբեր մեկնաբանություններ են տալիս: Կարծում եմ՝ նման պատմաբանների հետ գիտական հողի վրա իսկապես երկխոսություն հաստատելը հնարավոր է և օգտակար: Դա հնարավորություն կտա խորացնել մեր գիտելիքները ցեղասպանության մասին, մասնավորապես նրա պատճառների, հետևանքների մասին, ինչպե՞ս կազմակերպվեց, ի՞նչ ազդեցություն թողեց երկու ժողովրդի հոգեւոր կյանքի վրա և այլն: Այս դեպքում է հնարավոր երկխոսություն հաստատել:

Օ-Անցնենք համաժողովի թեմային: Նախ, խնդրեմ ներկայացրեք կազմակերպիչն և ապա՝ ովքեր էին մասնակիցները, ի՞նչ նպատակով էր հրավիրվել, ի՞նչ խնդիրներ ունեւ լուծելու և այլն:

□-Թուրքիայի տնտեսական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամը կառավարական կազմակերպություն չէ: Այն դեկավարում է Օզդեմ Սամբերգը, որը ժամանակին Թուրքիայի ԱԳ նախարարի առաջին տեղակալն էր, այնուհետև Թուրքիայի դեսպանը՝ Անգլիայում: Ընդ որում, այդ թուրք դիվանագետը հայտնի է որպես Հայաստանի հետ հարաբերությունների նորմալացման կողմնակիցներից մեկը: Բավական լուրջ կազմակերպություն է, և ինչպես ցույց տվեց համաժողովի ընթացքը, ամեն ինչ արվեց, որ իսկապես հնարավոր լինի աշխատանքային մթնոլորտ ստեղծել: Կարծում եմ՝ դա հաջողվեց:

Բացի երեք հարավկովկասյան հանրապետություններից՝ մասնակցում էին նաև Ռուսաստանի, Իրանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և մի շարք այլ միջազգային ազդեցիկ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Օ-Մեր տարածաշրջանի համար առավել կարևոր ու կենսական ի՞նչ հարցեր շոշափվեցին այնտեղ և ինչպե՞ս էին դրանք վերլուծվում:

□-Ուշագրավ էր Թուրքիայի ԱԳ նախարար Իսմայիլ Ջեմի առաջարկը՝ համաժողովի բացման խոսքում. Գարաբաջյան հակամարտության կարգավորման գործում Թուրքիան ըստանձնի միջնորդի դեր՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև: Այդ առաջարկը տեղում անմիջապես մերժեցին Հայաստանի ներկայացուցիչները, իսկ հետո ՀՀ ԱԳՆ-ն: Եվ դա բնական է, քանի որ Թուրքիան դիվանագիտական հարաբերություններ չունի Հայաստանի հետ: Ավելին, Թուրքիան, մերժելով նման հարաբերությունները, փակել է Թուրքիա-Հայաստան սահմանը, շրջափակել, միջազգային բոլոր կազմակերպություններում բոլոր հնարավոր ու անհնար միջոցներով պաշտպանում է Ադրբեջանին՝ այս հակամարտությունում վարելով էթնիկական ընդհանրության վրա հիմնված քաղաքականություն և ոչ մի հնարավորություն չունի միջնորդ դառնալու:

Օ-Հակասություններ կան տարածաշրջանի գրեթե բոլոր երկրների միջև, իսկ բանակցային գործընթացներում կողմերը պետք է հանդես գան հավասարի իրավունքով: Թուրքիան, սակայն, մի կողմից փորձում է երկխոսությունների միջոցով լուծել հարցերը, մյուս կողմից չի ուզում դիվանագիտական հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ: Ինչպե՞ս բացատրվեց այս տրամաբանական հակասությունը: Ինչպե՞ս հասկանալ Թուրքիայի այդ առաքելությունը:

□-Ձեր նշած հակասությունը նշվեց նաև թուրքական մամուլում: Ընդ որում, բավական լուրջ, հեղինակավոր թերթեր նշեցին՝ ինչպե՞ս կարելի է միջնորդի դեր ստանձնել այնպիսի հակամարտությունում, որտեղ Թուրքիան բացահայտ միակողմանի դիրքորոշում ունի: Ջեմի ելույթի այդ թեզը, կարելի է ասել, դարձավ նրա ամենակարևոր առաջարկներից մեկը և միանգամից արժանացավ բավական ակտիվ արձագանքի:

Այստեղ են փորձում իրենց դիրքերն ամրացնել և՛ Ռուսաստանը, և՛ Իրանը, և՛ Արեւմուտքը: Այնպես որ Թուրքիայում, իմ կարծիքով, պետք է որոշում ընդունեն կամ՝ կամ:

Օ-«Սառը պատերազմի» ավարտից հետո աշխարհաքաղաքականությունը մեր տարածաշրջանում փոխվել է և այդ «կամ՝ կամը» շատ է հուզում նաև մեզ: Թուրքիայի առաջարկած համագործակցությանը դեմ է միայն Ադրբեջանը, իսկ մյուս երկրները կարծես հակված են դրան: Ինչպե՞ս հասկանալ այդ «կամ՝ կամը»:



ԱՍԱԼԱ-ի մարտիկների հիշատակին

Անցած շաբաթ օրը Վանաձորի սպայի տան ճեմնարահում բացվեց նորագույն զինյալ ազատագրական պայքարի 26-ամյակին և Արեւմտյան Հայաստանի ազատագրման ճանապարհին նահատակված հայորդիներին նվիրված նյութերի ու լուսանկարների ցուցահանդեսը, որը կգործի մշտապես: Այն կազմակերպել են Հայկական ժողովրդային շարժման Հայաստանի ներկայացուցչությունը և 3-րդ բանակային կորպուսի սպայական կազմը: Բացման խոսք ասաց ներկայացուցչության ղեկավար Վազգեն Պետրոսյանը: Ողջույնի խոսք ասաց նաև Վանաձորի զինվորական ոստիկանության պետ Կամո Հովհաննիսյանը:

Միջոցառմանը մասնկացում էին ԱՍԱԼԱ-ի վետերան մարտիկներ, նախկին բանտարկյալներ, հանրահայտ «Վան» գործողության մասնակից Վազգեն Միսլայանը, Հակոբ Ջուլֆայանը, Սիմոն Նաիրյանը և Գեորգ Գյուզելյանը: Նրանք տարբեր տարիներին իրականացված գործողությունների ժամանակ վիրավորվել են, երկար տարիներ անցկացրել բանտերում: Գ.Գյուզելյանն արցախյան պատերազմի ժամանակ եղել է Վանաձորի «Ջորավար Անդրանիկ» կամավորական ջոկատի հրամանատարը, մասնակցել մեր պատմական հայրենիքի այդ մասին ազգային ազատագրական մարտերին:

Մեր այն հարցին, թե այժմ գոյություն ունի՞ արդյոք ԱՍԱԼԱ-ն, Վազգեն Պետրոսյանը պատասխանեց.

-ԱՍԱԼԱ-ն միշտ էլ եղել է ու կլինի, քանի դեռ չի ազատագրվել Արեւմտյան Հայաստանը: ԱԶԳ. 7.2.2001թ.

Այս տարի կբացվեն Լեհաստանի, Իրաքի, Բելառուսի և Ղազախստանի դեսպանությունները

ԵՐԵՎԱՆ, 6 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ:

Նախատեսվում է 2001 թվականին Հայաստանում բացել Լեհաստանի, Իրաքի, Բելառուսի և Ղազախստանի դեսպանություններ, իսկ Հայաստանը նախատեսում է դեսպանություն բացել Իրաքում: Այս մասին հայտնեցին ՀՀ ԱԳՆ հասարակայնության հետ հարաբերությունների վարչությունից: Ներկայումս Հայաստանում գործում են 19 երկրների դեսպանություններ, իսկ Հայաստանն արտերկրում ունի մոտ 50 դիվանագիտական ներկայացուցչություններ: *ԱԶԳ. 7.2.2001թ.*

Ամերիկյան վիզա...

Երեկ Հայաստանում ԱՄՆ դեսպանատան հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ջոն Բալյանն ասուլիսի էր հրավիրել զանգվածային լրատվության միջոցների (ՋԼՄ) ներկայացուցիչներին: Ասուլիսին մասնակցում էին հյուպատոս Լիլի Քոմերը և փոխհյուպատոս Գրիգոր Մոռիսոնը:

Հանդիպման նպատակն էր ՋԼՄ-ների միջոցով տեղեկացնել այն հնարավորությունները և իրավունքները, որոնք գործում են ամերիկյան վիզաների շուրջ: Ըստ 2000 թ. դեկտեմբերի 21-ին ընդունված նոր օրենքի, նույն ընտանիքի անդամները այսուհետ կարող են Մ.Նահանգներում իրար վերամիանալ հեշտացված կարգով: Նույն օրենքով, եթե անձը

ԱՄՆ-ում անօրինական կարգավիճակում է գտնվում և սպառել է իր ժամկետը, կարող է առանց երկրից դուրս գալու 1000 դոլար վճարելուց հետո օրինականացնել իր կարգավիճակը, թեև դա բնավ չի նշանակում, որ տվյալ անձը դրանով գրին քարտ է ստանում:

Տեղեկություն տրվեց, որ 2000 թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 30-ը ԱՄՆ մեկնելու վիզա է ստացել 12098 մարդ, մերժվել է 13948-ը: Ընդհանուր դիմողների քանակը կազմել է 26046 դիմում: Մինչդեռ 1999 թ.-ին 12264-ը ստացել են վիզա, 16210-ը՝ մերժվել, իսկ դիմողների թիվը կազմել է 28.474: 2000 թ. հոկտեմբերի 1-ից մինչև այս տարվա փետրվարի 1-ը դիմել է 10850 մարդ, որոնցից 4258 ստացել են թույլտվություն, իսկ 6592-ը՝ մերժվել, որը կազմում է մոտավորապես 66 տոկոսը: *ԱԶԳ. 3.2.2001թ.*

Հետաքրքիր է իմանալ

Ալիեի և Քոչարյանի հետ ունեցած հանդիպումներից հետո Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակը դրա արդյունքների մասին նամակ է գրել ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշին եվ Ռ-Գ նախագահ Վլադիմիր Պուտինին: Հետաքրքիրն այն է, որ Ջորջ Բուշը պատասխան նամակով Շիրակին շնորհակալություն է հայտնել՝ միջնորդական առաքելության համար, իսկ Պուտինը՝ ոչ: *ԱԶԳ. 3.2.2001թ.*

Արհեստավարժն ուրիշ է

Նախնական տվյալներով 2000թ. Հայաստանում կատարված օտարերկրյա ներդրումների ծավալը կազմել է 170-180



մլն ԱՄՆ դոլար, հաղորդում է «Նոյյան տապանը»: Հիշեցնենք, որ ՀՀ-ում օտարերկրյա ներդրումների առավելագույն ծավալը ապահովել է վարչապետ Արմեն Գարբինյանը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ 17.2.2001



Եվրամիությունն անհամբեր է ԼՂ հակամարտության լուծման հարցում

Եռյակի այցը Երեւան

«Մեր եռյակի այցը ձեր երկիր ապացուցում է Եվրամիության ուշադրությունն այս տարածաշրջանի հանդեպ», երեկ ՀՀ նախագահի նստավայրում ասաց Շվեդիայի արտգործնախարար, Եւրոդայի Միութեան (ԵՄ) գլխավոր քարտուղար Աննա Լինդն իր հինգ րոպեանոց բրիֆինգի ժամանակ:

Եվրամիության եռյակի ներկայացուցիչները Երեւանում հանդիպել են ՀՀ նախագահի, ԱՇ խոսնակի, խմբակցությունների ղեկավարների, արտգործնախարարի հետ: Տկն Լինդը նշեց, թե բոլոր հանդիպումները հետաքրքրական էին, բայց իրենց համար ամենակարեւորն ու էականը ՀՀ իշխանությունների հավաստիացումներն էին, որ ԼՂ հակամարտությունը կլուծվի բացառապես խաղաղ ճանապարհով: «Մենք անհամբեր սպասում ենք ԼՂ հակամարտության վերջնական կարգավորմանը, ինչը հնարավորություն կտա ընդլայնել ու խորացնել այս տարածաշրջանի հետ համագործակցությունը», նշեց Շվեդիայի արտգործնախարարը: Նա հավաստեց ԵՄ պատրաստակամությունը՝ հնարավորինս աջակցելու թե՛ հակամարտության լուծման, թե՛ տնտեսական ու քաղաքական գործընթացներին: Այնուամենայնիվ, ԵՄ գլխավոր քարտուղարը խոստովանեց, որ թե՛ Ղարաբաղի խնդրին, թե՛ տարածաշրջանում աճող քաղաքական, տնտեսական ռեֆորմներին առնչվող քննարկումներում Հայաստանի իշխանավորների հետ իրենք չեն փորձել շատ խորը գնալ:

Քրիս Պատենը հիշեցրեց, որ Հայաստանի հետ համագործակցության ծրագրերում ԵՄ-ն ծախսել է 250 մլն եվրո: «Մտադիր ենք շարունակել այդ ծրագրերը, մասնավորապես Ինոգեյթն ու Տրասեկան: Կշարունակենք տրամադրել գումարներ մակրոտնտեսական կայու-

նացման եւ պարենային անվտանգության ծրագրերի շրջանակներում»: Պրն Պատենը նշեց նաեւ, որ համագործակցության շրջանակներում նախագահ Քոչարյանն ընդգրկել է հատկապես բարձր տեխնոլոգիաների ոլորտը:

ԱԶԳ. 21.2.2001թ.



Ալիեւը բացվում է

Ի տարբերություն Հայաստանի նախագահի, Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւը որոշել է իր երկրի խորհրդարանում քննարկման առարկա դարձնել Ղարաբաղի հարցի կարգավորման շուրջ ձեռք բերված պայմանավորվածությունները:

Փետրվարի 23-ի Միլի Մեջլիսը քննարկելու է հակամարտության կարգավորման ուղիները: Ի դեպ, ադրբեջանական աղբյուրները նշում են, որ Ժակ Շիրակը հանդես է եկել նոր առաջարկություններով՝ հիմնվելով նախկինում արված «Փուլային», «Փաթեթային» եւ «Ընդհանուր պետություն» տարբերակների վրա:

ԱԶԳ. 22.2.2001թ.



Անօգնական վիճակ

ՀՀ արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանյանը երեկ անդրադառնալով Ղարաբաղի հարցի կարգավորման գործընթացին՝ հայտարարել է, թե կարգավորմանն ուղղված նոր առաջարկների մասին դեռեւս վաղ է խոսել:

Այս արտահայտությունը ստիպում է մտածել, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի հանրահայտ առաջարկները արդեն իսկ հնացած են: Սրանից էլ ենթադրվում է, որ հարցը կարգավորվելու է նոր առաջարկների շրջանակներում: Հնարավոր է արդյոք կանխատեսել, թե ինչպիսին են լինելու դրանք: Թերեւս, այո՝ Ադրբեջանը, հաշվի առնելով հայ-ռուսական հարաբերությունների սառեցումը եվ ընդհակառակը՝ ռուս-ադրբեջանական հարաբերությունների ջերմացումը, պարբերաբար ակնարկում է հարցը ռազմական եղանակով լուծելու իր պատրաստակամության մասին: Նման պատրաստակամությունը, անշուշտ, դիվանագիտական նշանակություն ունի: Ադրբեջանը գիտի, որ միջազգային հանրությունը չի ցանկանա հարցի ռազմական լուծում, եվ նման պատրաստակամություն արտահայտելով՝ փորձում է հասկացնել մի-

ջազգային հանրությանը, թե նոր առաջարկությունները պետք է լինեն այնպիսին, որ հանդարտեցնեն Ադրբեջանի ռազմատենչությունը: Ցավոք, Հայաստանը սրան հակադրելու ոչինչ չունի: Եւ մեր դիվանագիտությունը, փաստորեն, հայտնվել է անօգնական վիճակում: Այս պարագայում, թերեւս, Հայաստանին դարձյալ ձեռնտու է հարցի չկարգավորման վիճակը: Այսինքն, այսօր ոչինչ հնարավոր չէ անել, ուստի, գոնե պետք է հարցը փոխանցել վաղվան:

ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ 28.2.2001



Իրաքում բացվեց Հայաստանի դեսպանատունը

Փետրվարի 25-26-ը ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանն աշխատանքային այցով գտնվում էր Իրաքի Հանրապետությունում: Այցի նպատակն էր քննարկել Իրաքի ղեկավարության հետ երկուստեք շահավետ համագործակցության հնարավորությունները, հատկապես՝ առևտրատնտեսական ոլորտներում:

Փետրվարի 25-ին նախարար Օսկանյանը հանդիպել է Իրաքի փոխվարչապետ Թարեք Ազիզի հետ: Կարեւորվել է երկկողմ համագործակցության համար անհրաժեշտ իրավապայմանագրային դաշտի ստեղծումը:

Նույն օրը երեկոյան տեղի է ունեցել Բաղդադում ՀՀ դեսպանության բացման արարողությունը:

Փետրվարի 26-ի առավոտյան Վարդան Օսկանյանին ընդունել է Իրաքի Հանրապետության նախագահ Սադդամ Հուսեյնը, որի հետ քննարկվել են երկու երկրների համագործակցության հնարավորությունները:


Նախարար Օսկանյանը հանդիպել է նաեւ Իրաքի փոխնախագահ Տահայասին Ռամադանիի, նավթի նախարար Ամիր Ռաշիդ Մուհամմադ ալ-Ռաբայիի եւ փոխվարչապետ, ֆինանսների նախարար Հիքմաթ Իբրահիմ ալ-Ազաուիի հետ: Հանդիպումների ժամանակ քրննարկվել են առևտրատնտեսական բնագավառներում համագործակցության ուղիները: Նավթի նախարարի հետ հանդիպման ընթացքում մանրամասնվել են «Պարեն՝ նավթի դիմաց» ծրագրի շրջանակներում հայկական ընկերությունների մասնակցության հնա-



Ալվիդասը 20 տարեկանում

ԾԵՐՈՒՆՈՒ ԱՐՏԱՔԻՆՈՎ ՔՍԱՆԱՄՅԱ ՊԱՏԱՆԻՆ

Վերների ախտանիշ, այսօր է կոչվում այն հիվանդությունը, որի մասին վերջերս սկսել են ավելի ու ավելի հաճախ խոսել: Առայժմ քիչ ուսումնասիրված ու հազվադեպ այդ հիվանդության ժամանակ, օրգանիզմում կասարվող երեւոյթներն արագանցող մեխանիզմն առայժմ բացահայտված չէ:



Ալվիդասը 26 տարեկանում

Գիտությանը հայտնի է միայն այն, որ Վերների հիվանդությունը օրգանիզմում նդասում է ծնողներից ժառանգած թերաթեֆ գեների զարգացմանն ու բազմացմանը, չնայած գենետիկները նույնպես անբողջական դասկերացում չունեն հիվանդության ժառանգականության մասին: Հիվանդությունը, որի ժամանակ երիտասարդ օրգանիզմի բջիջները կասաղի արագությամբ ծերանում են, կարճացնում են մարդու առանց այդ էլ կարծ կյանքը...

Ընդամենը յոթ տարի առաջ Գուդելյաուսկասների ընտանիքը շահ սովորական ընտանիք էր: Սակայն կասարվեց անստորաբանը. վրա հասած դժբախտությունը փոխեց ամեն ինչ... Ամուսնությունից մեկ տարի էլ չէր անցել, երբ լիսվացի Ալվիդասը հայելուում նայելիս տարօրինակ երեւոյթներ էր նկատում նրա աչքերի շուրջ կնճիռներ էին հայտնվել, դեմքին մի տեսակ մեծի հայացք կար: Բայց ինչպես ասում են կնճիռներով տարվելու եւ զբաղվելու ժամանակը չէր, նորաստեղծ ընտանիք էին հազար ու մի հոգսեր, նորածին դստիկ: Միայն երկու ամիս անց հայելու առաջ հաղադելով, Ալվիդասը նկատեց, որ քսան տարեկանի տեսք չունի, նրա դեմքի ու մարմնի հետ անհավանական արագությամբ փոփոխություններ էին կասարվում: Ամեն առավոտ, մոտենալով այդ կախարհական աղակուն, Ալվիդասը հույս ուներ տեսնել իր նախկին արտաքինը, բայց ամեն անգամ տեսնում էր մի օտար ծերուկի դեմք եւ միայն աչքերն էին հուսում, որ հայելու միջոց իրեն նայող այդ ծերուկն ինքն է:

Սկսվեցին բժիշկների ու հոգեբանների մոտ այցելությունները: Ալվիդասը գնում էր մի մասնագետից մյուսի մոտ, մի հայտնի դոկտորի մոտից մեկ այլի, նրանց ախտաստեղծակներում թողնելով մեծ գումարներ եւ իր դժբախտության դասձառները գտնելու հույսը...

..Ալվիդասը ծայրը գնալով կոտսանում ու խզվում էր, ձեռքերի ու դարանոցի մակեր թոճում ու կնճռոտվում: Սակայն, ինչպես ինքն էր լինում, իրեն զգում էր իր տարիքին համադասարան, ձիւս էր փոքր ինչ շուտ էր հոգնում, քան առաջ: Ալվիդասի ասելով իր արտաքինից բացի կյանքում ոչինչ չի փոխվել, առաջվա դեպ ախտաստեղծակ էր գնում, սանն օգնում կնոջը, զբաղվում դստիկի հետ...

Դստիկը մեկ տարեկան չկար, երբ հայրը «ծերունի դարձավ», այդ իսկ դասձառով էլ ծնողների հետ չէր կարողանում կիսել այն դժբախտությունն ու ցավը, որոնք ունեին նրանք:

Օրիսարենը Ալվիդասի կինը գեղեցկուկի Լայման, հաճախ էր հիշում ամուսնու գեղեցիկ դեմքը, հաճելի ծայրը, քնուկ ձեռքերը եւ նուրբ շուրթերը:

Վրա հասած դժբախտությունը այս ընտանիքը մեծակյաց դարձրեց, ոչ ոքի հյուր չէին գնում, իրենք հյուր չէին ընդունում, խուսափում էին բոլորից: Լայման ախտաստեղծակ էր գնում իրենց բնակավայրից 18կմ հեռու մի բանավան, ոչ այն դասձառով, որ ամառում է «ծեր» ամուսնուց, այլ որ խուսափի իր ետեւից հնչող կարեկցանքի խոսքեր լսելուց:

Նրանք ամուսնում են հրաժարի հույսով,

կրականաղես հրաժարվում են ինքն թեմաներին վերաբերող հարցերին դասախառնելուց եւ առիտարակ ախտաստեղծակ են անձնական հարցեր չեռուստել:

Մոտ երեք տարի առաջ բժիշկները եզրահանգման եկան, Ալվիդասը հիվանդ էր շահ հազվադեպ եւ անբուժելի Վերների հիվանդությամբ: Այդ հիվանդության ժամանակ օրգանիզմի բջիջներն առանց դասձառների սկսում են մեծ արագությամբ ծերանալ: Որդես կանոն Վերների ախտանիշով տարադողները ծերանում են ոչ միայն արտաքինաղես, այլեւ փոխվում են ներուստ, ընդհուլ միջնեւ ներքին դարազանների ծերացում: Սակայն ինչպես Ալվիդասն էր լինում, «Այս թոճանած ու թառամած մակերի տակ ես երիտասարդ կենսունակ եմ մնացել, իմ բոլոր օրգանները կարգին են: Համենայն դեպս ռեմեդեցեն ու անալիզները ոչ մի արտաքին փոփոխություն ցույց չեն տվել»: Ալվիդասն այդ ախտորոճանը հավասալ չի ուզում եւ փորձում է իր հիվանդության դասձառները գտնել հորմոնալ խանգարման մեջ:

Քիչ ավելի ուճ նրա հոգսերն ավելացան ավելի շուտ ավելացրեցին տեղեկան լրագրողները. «ես ասես վայրի գազան լինելի մարդկանց մեջ, բոլորն ուզում էին գալ ու տեսնել ինձ, տեղեկան բոլոր թերթերը գրեցին իմ մասին հեռուստատեսությամբ ցույց տվեցին»: Ալվիդասի մասին լուրը արագ տարածվեց նախ իրենց ավանում, աղա ողջ քաղաքում՝ արդյոք վարակիչ չէ՞ այդ հիվանդությունը, այս հարցն էր, որ մտահոգում էր բոլորին: Ուման կա-



րեկցում էին Ալվիդասին, ոմանք ուզում էին խայթել, իսկ ոմանք էլ ցուցադրաբար հրաժարվում էին նրան ձեռնով բարեկերպացնելուց. «*Ների բարեկամ հանկարծ ես էլ կսկսեմ ծերանալ*»: Շատ կարճ ժամանակ անց նրանց սանը սարօրինակ հեռախոսազանգեր էին հնչում եւ Ալվիդասին առաջարկում իր սարօրինակությունն օգտագործել որեւէ դեղորայք գովազդելու համար: Այդ ամենն արդեն չափազանց վատ էր անդրադարձնում այդ ընթացիկի վրա: Առանց այդ էլ այս դաստիարակման մեջ մութ ու անբացատրելի հարցեր շատ կան, օրինակ, թե ինչո՞ւ բժիշկները արյան գեներիտիկ բարդ անալիզներ չեն անում, այլ ուսումնասիրությունների չեն անում, երբ հաճախում են հանգամանք, որ Ալվիդասին ուզում են հեռացնել նաեւ աշխարհից, ապա նրանց վիճակն իրոք անհասկանալի է եւ ինչպե՞ս ասում է կինը՝ Լայման նրանց միայն հրաժարել կիրկի: Եվ այդպէս հրաժարել սղասելով գոյատևում է այդ, նախկինում շատ հասարակ, լիարժեք ընթացիկը...



Նույն անբուժելի հիվանդությունից է սառադրում 12-ամյա Չիրան



Անժամանակ ծերությունը դրոշմվեց դասանի աղջկա դեմքին

Չարմանալի մի երեւոյթի հետեւանով, դասանի աղջկա դեմքը դարձավ 70 ամյա դասանի դեմք: Այս 12 ամյա աղջիկը, որի դեմքը գեներիտիկական դասառնությունով ծերացել է, սովորում է չորրորդ դասարանում եւ վայելում է դասարանիչների եւ ուսուցիչների սերը: Նրա ծնողները հորեղբոր որդիներ են, որոնք 9 զավակ են ունեցել, որոնցից 6-ը մահացել են, նրանք այժմ ունեն մի 5 ամյա տղա եւ մի 15 ամյա աղջիկ: «Չիրան» ընթացիկի 7-րդ երեխան է, որը ծնված օրից սառադրում է ծերության հիվանդությունից: Տեղեկությունների համաձայն մի բարերար հանձն է առել «Չիրան»-ի բուժման ծախսերը Թեհրանում:

20 →
բավորությունները՝ ՄԱԿ-ի պատժամիջոցների հանձնաժողովի կողմից ասիական ված կարգով եւ այլ տեխնիկական հարցեր:

ՀՀ ԱԳ նախարարը հանդիպել է նաեւ իրաքահայ համայնքի հետ, որի ժամանակ քննարկվել են Հայաստան-Սփյուռք հարաբերությունները:

ԱԶԳ. 27.2.2001թ.

Միայն հզոր Ադրբեջանին

«Միամտություն է ենթադրել, թե հայերը կհամաձայնեն սեփական տարածքների փոխանակման տարբերակին»:

Այս տեսակետին է հայտնել Ադրբեջանի նախագահի աշխատակազմի նախկին ղեկավար, քաղաքագետ Էլդար Նամազովը:

Ըստ նրա, Մեդրին ռազմավարական կարեւորագույն նշանակություն ունի Հայաստանի համար եւ նրա շուրջ խոսակցություններն անհեթեթություն են: Հայաստանը զիջումների կզնա այն ժամանակ, երբ Ադրբեջանը հզոր բանակ եւ տնտեսություն կունենա:

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ 27.2.2001թ.

18 →

ԱՍՈՒԼԻՍ ՊԱՏՄԱՐԱՆ ՌՈՒԲԵՆ ՍԱՅԱՐՅԱՆԻ . . .

□-Համաժողովում բավական ընդգծված հնչեց այն տեսակետը, որ չպետք է սպասել, որ տարածաշրջանում հիմնական հակամարտությունները լուծվեն, հետո միայն փորձեն սկսել համագործակցություն՝ ամենատարբեր ոլորտներում: Մասնակիցների մեծ մասը, նաեւ Թուրքիայի ներկայացուցիչները, ընդգծեցին այն միտքը, որ պետք է հնարավոր ամեն ինչ անել՝ տարածաշրջանի երկրների եւ նրանց հարեւանների միջեւ հաստատելու այնպիսի հարաբերություններ, համագործակցության այնպիսի ձևեր, որոնք կբարելավեն ընդհանուր մթնոլորտը տարածաշրջանում եւ իրենց հերթին կնպաստեն հակամարտության կարգավորմանը: Այս հողի վրա պարզորոշ երեսաց Ադրբեջանի դիվանագիտության մեկուսացումը: Ինչպես գիտենք՝ ադրբեջանական դիվանագիտությունը տարիներ շարունակ փորձում է անցկացնել այն գիծը, որ պետք է սկզբում լուծել բոլոր հակամարտությունները, հետո անցնել համագործակցության:

○-Ինչպե՞ս եք գնահատում համաժողովի նշանակությունը:

□-Միանգամայն դրական: Մա այն քայլերից մեկն է, որը Հարավային Կովկասում իսկապես բարի դրացիական հարաբերությունների հաստատման համար էլքեր է նախանշում: Բոլորիս է հայտնի, որ դրան հասնելու համար Հարավային Կովկասը դեռ երկար ճանապարհ ունի անցնելու:

○-Տեսանելի ապագայում ուրվագծվո՞ւմ է այդ համագործակցության հնարավորությունը:

□-Նման միջոցառումներս պետք է ավելի հաճախակի իրականացվեն: Եվ ոչ միայն տարածաշրջանում, այլ գուցե եւ Եվրոպայում: Այս կերպ հնարավոր կլինի հասնել համագործակցության եւ բարի դրացիական հարաբերություններին:

ՀԱՍՄԻԿ ԳՈՒԼԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՅԸ ԻՐԱՆԻ ԴԵՄՊԱՆԻ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԵԼ Է ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ

Հայաստանի Ազգային Ժողովի (ԱԺ) նախագահ Արմեն Խաչատրյանը փետրվարի 28-ին երկարատև զրույց է ունեցել Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մոհամմադ Քոլեյնիի հետ: Ըստ ԱԺ հասարակայնության հետ կապերի վարչության, Հայաստանի ԱԺ նախագահը կարծիք է հայտնել, որ ԼՂ հիմնախնդրի կարգավորմանը պետք է գնալ միայն խաղաղ եւ փոխվստահության հասնելու ճանապարհով, որին միայն նպաստում են Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների, ինչպես նաեւ խորհրդարանների ղեկավարների, խորհրդարանականների հաճախակի դարձած հանդիպումները: «Եւ եթե բարձր մակարդակով պայմանավորվածություններ լինեն, դրանք առաջնահերթ կքննարկվեն խորհրդարանում»:

Զրույցի ընթացքում կարելի է

են խորհրդարանների, մասնավորապես բարեկամության պատգամավորական խմբերի միջեւ շփումների աշխուժացումը, տեղեկատվության փոխանակման արդյունավետ մեխանիզմների կիրառումը, փոխայցերի կազմակերպումը:

Մ. Քոլեյնիին, Իրանի պատրաստակամությունը հայտնեց մեծամասշտաբ ներդրումներ կատարել Հայաստանի տնտեսության մեջ, եթե լուծվի համապատասխան իրավական բազայի ապահովման խնդիրը: Նա ավելացրեց Իրանը պատրաստ է նաեւ ներկրել Հայաստանում արտադրվող տարբեր ապրանքներ, հաստատել ազատ այցագրային ռեժիմ, աջակցել սահմանային առևտրի աշխուժացմանը:

Ըստ դեսպանի կոնկրետ միջոցառումներ են նախատեսվում նաեւ Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակի կապակցությամբ: Իրանը, մաս-

նավորապես, պատրասվում է կազմակերպել խոշոր ցուցահանդես եւ ուխտագնացություն դեպի Իրանում գտվող հայկական եկեղեցիներ:

Հայաստանի ԱԺ նախագահ՝ Արմեն Խաչատրյանն խորհրդարանի եւ իր անունից խոստացել է ըստ ամենայնի աջակցել բոլոր, այդ թվում՝ տնտեսական նախաձեռնություններին: Նա կարելի է նաեւ մարզերի մակարդակով շփումների աշխուժացումը: «Իրանի հետ համագործակցության զարգացումը Հայաստանի արտաքին քաղաքական առաջնահերթություններից է», ասել է Արմեն Խաչատրյանը:

Ըստ Իրանի դեսպանի, Հայաստանին սահմանակից Ատրպատականի նահանգը միայն անցյալ տարի արտահանել է 570 մլն ԱՄՆ դոլարի արտադրանք, չհաշված նավթամթերքը:

Մտքեր են փոխանակվել նաեւ այլ խնդիրների վերաբերյալ: ✓

→ Իրանը լուրջապես է բոլորիս

Նախարարը անդրադառնալով ժամանակի առաջին իմաստի դասառների ցուցահանդեսին ասաց, «մենք այնքան արագորակաբար փոխանակվում ենք, որոնք Իման Ալիի եւ նրա զավակների լուսավոր դեմքերն էին դասերը, դա մեր դաստիարակության գանձարանում եւ նույնպես մեր ազգի հիօնոլոգիայի մեջ կմնա: Այդ հավաքածուն ցուցադրում էր այն սերն ու հարգանքը, որը գոյություն ունի սարբեր կրոնների միջեւ»:

Մասշտաբային իր ելույթը շարունակեց այսպես. «Մրազան դաստիարակության օրերին երբ հեղափոխությունը ճգնաժամային դասեր էր արժանանում, նույնպես բոլոր կրոնների համագործակցությունը եւ միասնությունը, նույն համերաշխության եւ հարգանքի արձանագրություն էր»:

Նա իր խոսքերի շարունակության մեջ ասաց. «Բաղադրությունների երկխոսությանը սարին հարմար առիթ ստեղծեց միմյանց հետ երկխոսություն ունենալու համար: Այն սարիններին երբ հարգելի նախագահ դրն. Խաթանին էր այս նախարարությունը վարում, հիմնադրվեց դավանանքների երկխոսության գաղափարը, որը մտավորականների

հավանությունը ցահեց»: Նա ավելացրեց. «2001 թվականը կարող է նաեւ ավելի լայն իմաստ ստանալ եւ մենք կրոնական առաջնորդների իմաստուն երկխոսությունների սարածման վկայ լինենք, հարցեր որոնք աբխազիում հոգեւորական-մտային զարգացման դասձառ կդառնան, եւ Իրանը բարոյականության եւ հոգեւոր մտայնության դրոշակի սիմվոլը կդառնա, մի հաջողություն, որը մյուս դավանանքների համագործակցությամբ կսացվի եւ հասկառդես դուր կրոնական առաջնորդներ եւ դասախանասուններ կարելու դեր ունեն դրանում»:

Նախարարը իր խոսքերի այլ բաժնում ասաց. «գաղափարները, որոնք արժանավեր են այստեղ, կքննարկվի մասնագիտական խմբերում, որտեղ ներկա կլինեն նաեւ դուր»: Նա շեշտեց որ «Իրանը լուրջապես է բոլորիս եւ նրա հարցերը լուծելու ուղղությամբ դեմք է միասին աբխազիում: Այն ինչի մասին խոսվեց այստեղ մեր միասնական դասականությունն է, որի իրականացման համար դեմք է աբխազիում եւ փնտրենք հարմար ուղղիներ, իրանում ավելի լավ եւ բարենորոգյալ ձեւով արդիւն համար, մի երեւոյթ որը հյուս Աստծո շունջով ձեզ հետ միասին կիրականացվի»:


Թեհրանը դարձյալ պատրաստակամ է հանդես գալու որպես միջնորդ

Մ. Խաթամի.

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԱՄՈՒՐՋ Է ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ԱՄԻԱՅԻ ՄԻՋԵՎ

Պաշտոնական Թեհրանը հերթական անգամ հայտարարել է դարաբաղյալ հակամարտության կարգավորման գործում միջնորդ հանդես գալու իր պատրաստակամության մասին: «Մենք պատրաստ ենք որպես միջնորդ հանդես գալ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ դարաբաղյալ հակամարտության կարգավորման գործում», հայտարարել է Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մոհամադ Խաթամին՝ վերջերս աշխատանքային այցով Իրանում գտնվող Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանյանի հետ հանդիպման ընթացքում:

Ինչպես հաղորդում է «IRNA»-ն, ԻԻՀ ղեկավարը ողջունել է Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների միջեւ հունվարի վերջին, Փարիզում կայացած երկկողմ բանակցությունների հերթական փուլը: «Մենք հուսով ենք, որ բարի կամքի դեպքում Հայաստանը եւ Ադրբեջանը կլուծեն Լեռնային Ղարաբաղի առնչությամբ իրենց 13-ամյա հակամարտությունը եւ խաղաղություն կհաստատեն», հայտարարել է նախագահ Խաթամին: Նա նաեւ Հարավային Կովկասի պետություններին կոչ է արել զարգացնել համագործակցությունը՝ տարածաշրջանում խաղաղության, կայունության եւ անվտանգության հաստատման



նպատակով:

Հայաստանը կամուրջ է Եվրոպայի եւ Ասիայի միջեւ, իսկ տրանսպորտի, էներգետիկայի եւ գազի ոլորտներում Հայաստանի հետ Իրանի համագործակցությունը խոշոր նշանակություն ունի ինչպես երկու պետությունների, այնպես էլ տարածաշրջանի համար: Իրան-Հայաստան գազամուղի շահագործումով նոր փուլ կբացվի հայ-իրանական հարաբերություններում: Գազամուղը նաեւ «տարածաշրջանում կայունության գործոն» կդառնա, նշել է նախագահը:

Իր հերթին Հայաստանի արտգործ նախարար Վարդան Օսկանյանը, ընդգծելով Իրանի կարեւոր դերը տարածաշրջանում, նշել է, որ Թեհրանի քաղաքականությունն ուղղված է տարածաշրջանային կայունության պահպանմանը: Իրան-Հայաստան գազամուղի կառուցումը

կդառնա խաղաղության եւ անվտանգության գիծ, հուսով է Վարդան Օսկանյանը: Նա իրանական կողմին կոչ է արել խորացնել երկկողմ տնտեսական համագործակցությունը Հայաստանի հետ:

Հայաստանի արտգործնախարարը Հայաստանի նախագահի եւ ժողովրդի անունից ԻԻՀ նախագահին եւ ողջ իրանական ժողովրդին շնորհավորել է Իրանի Իսլամական Հեղափոխության 22-րդ տարեդարձի կապակցությամբ:

Ղարաբաղյալ հակամարտության խաղաղ կարգավորման թեման քննարկվել է նաեւ Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարի եւ Իրանի իր գործընկեր Քամալ Խարազիի հանդիպման ժամանակ: Իրանի ԱԳՆ ղեկավարը փոխգիջումների հիման վրա հակամարտության շուտափույթ կարգավորման հույս է հայտնել:

